- առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի

	միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
	233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 238 «Չվաստակաժ ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 543 «Ընթացիկ պահուստներ»
- անուղղակի հարկեր (ԱԱՀ , ակցիզային հարկ)	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»
4. Որպես պետական շնորհի ստացված դրամական միջոցների հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»
5. Սահմանված հատուցումների պլաններին մասհանումներ	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»
6. Արտարժույթային միջոցների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 255 «Դրամական միջոցներ ճանապարհին»

255 «Դրամական միջոցներ ճանապարհին» հաշիվը նախատեսված է ճանապարհին գտնվող ազգային արժույթով և արտարժույթով դրամական միջոցների, այսինքն՝ կազմակերպության հաշվարկային կամ այլ հաշիվներ մուտքագրելու համար (սակայն դեռևս չմուտքագրված) խնայողական բանկ, փոստային բաժանմունքներ մուտքագրված դրամական միջոցների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են ճանապարհին գտնվող դրամական միջոցները, իսկ կրեդիտում՝ համապատասխան հաշիվներ մուտք եղած դրամական միջոցները: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ճանապարհին գտնվող դրամական միջոցների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արժույթի տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

255 «Դրամական միջոցներ ճանապարհին» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ճանապարհին գտնվող դրամական միջոցների արտացոլում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտ-ների գծով» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»

255 «Դրամական միջոցներ ճանապարհին» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ճանապարհին գտնվող դրամական միջոցների մուտքագրումը հաշվարկային և արտարժույթային հաշիվներին	252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

Հաշիվ 256 «Դրամական փաստաթղթեր»

256 «Դրամական փաստաթղթեր» հաշիվը նախատեսված է կազմակերպության դրամարկդում գտնվող դրամական փաստաթղթերի (փոստային նամականիշեր, վճարված տրանսպորտային տոմսեր, հանգստյան տների և առողջարանների ուղեգրեր և այլն) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են մուտք եղած դրամական փաստաթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է դրամական փաստաթղթերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Դրամական փաստաթղթերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փաստաթղթերի տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

256 «Դրամական փաստաթղթեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Դրամական փաստաթղթերի ձեռք բերում	228 «Դեբիտորական պարտքեր անձնակազմի հետ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
2. Գույքագրմամբ հայտնաբերված դրամական փաստաթղթերի ավելցուկի մուտքագրում	614 «Գործառնական այլ եկամուտներ»

256 «Դրամական փաստաթղթեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Դրամական փաստաթղթերի օգտագործում	713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր»
2. Գույքագրմամբ հայտնաբերված դրամական փաստաթղթերի պակասորդի արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»

ԽՈՒՄԲ 26 «ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ»

26 «Այլ ընթացիկ ակտիվներ» խումբն իր մեջ ներառում է 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով», 262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով», 263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվները:

Հաշիվ 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»

261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով» հաշիվը նախատեսված է հաշվանցման (փոխհատուցման) ենթակա այն անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնց հաշվանցման (փոխհատուցման) պահը հետաձգված է:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են անուղղակի հարկերի գծով առաջացած ընթացիկ ակտիվների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց դուրս գրումը, երբ հաշվանցման իրավունքը վրա է հասնում կամ էլ վերանում է: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առաջացման, դուրս գրման ժամկետների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

**261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով» հաշիվը
դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ձեռք բերված (ստացված) ակտիվների, ծա- ռայությունների, աշխատանքների գծով հարկային հաշիվներում առկա և հաշվանցվող (փոխհատուցվող) ԱԱՀ-ի գումարների արտացոլում, մասնավորապես, երբ ձեռք բեր- ման (ստացման) և հաշվանցման (փոխհա- տուցման) պահերը չեն համընկնում	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
2. Ձեռք բերված (ստացված) ակտիվների, ծա- ռայությունների, աշխատանքների գծով հաշ- վանցվող (փոխհատուցվող) ակցիզային հարկի գումարների արտացոլում, երբ ձեռք բերման (ստացման) և հաշվանցման (փոխհա- տուցման) պահերը չեն համընկնում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

**261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով» հաշիվը
կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հաշվանցումն հետաձգված ԱԱՀ-ի գծով հաշվանցման իրավունքի ձեռք բերում	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
2. Հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների դուրս գրում՝ հաշվանցման իրավունքը կորցնելիս	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Ակցիզային հարկի գծով ընթացիկ ակտիվների դուրս գրում	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

**Հաշիվ 262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման
պայմանագրերի գծով»**

262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը նախատեսված է կապալառուների մոտ, «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11-ին համապատասխան, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվ ճանաչման ենթակա «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարների» վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանագրի աշխատանքների դիմաց պատվիրատուից ստացվելիք համախառն գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ, կուտակային հիմունքով, կրած (կատարված) ծախսումներ, գումարած՝ ճանաչված շահույթներ, հանած՝ ճանաչված վնասներ և հանած՝ միջանկյալ հաշիվների գումարը, երբ զուտ հանրագումարը դրական թիվ է:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է պայմանագրերի գծով ճանաչված այն հասույթի գումարը, որի գծով հաշիվ (հաշիվ ապրանքագիր) ներկայացված չէ, իսկ կրեդիտում՝ այդ գումարների դասակարգումը դեբիտորական պարտքերին (ստացված կանխավճարների մարումների)՝ արդեն ճանաչված հասույթների գծով հաշիվ (հաշիվ ապրանքագիր) ներկայացնելիս մարումները: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է պայմանագրային աշխատանքների գծով պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարները (որպես ակտիվ) հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կառուցման պայմանագրերի գծով պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանագրերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

262 «Պարվիրապրություններից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների գծով ճանաչված հասույթ՝ ներկայացված հաշիվների (հաշիվ ապրանքագրերի) գումարը գերազանցող չափով	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»
2. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների վրա կատարված ծախսումների՝ դեռ ծախս չճանաչված մաս	811 «Հիմնական արտադրություն»

262 «Պարվիրապրություններից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կառուցման պայմանագրերի գծով հաշվի (հաշվ ապրանքագրի) ներկայացում արդեն որպես հասույթ ճանաչված գումարների գծով	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
2. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների վրա նախկինում կատարված ծախսումների՝ հաշվետու ժամանակաշրջանում ծախս ճանաչումը	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»

Հաշիվ 263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվը նախատեսված է որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբերի ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ակտիվները և օտարման խմբերը որպես վաճառքի համար պահվող դասակարգելու չափանիշները և դրանց

չափման մոտեցումները սահմանված են «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբերի ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների գումարները, ինչպես նաև այդ ոչ ընթացիկ ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի աճը (արժեզրկման հակադարձումը), իսկ կրեդիտում՝ «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի նվազումը (արժեզրկումը) օտարումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների հաշվեկշռային արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 2631 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցներ», 2632 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ նյութական ակտիվներ», 2633 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված այլ ոչ ընթացիկ ակտիվներ», 2634 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառված ընթացիկ ակտիվներ»:

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների (ներառյալ օտարման խմբերի ակտիվների) արտացոլում՝ որպես այդպիսին դասակարգմանը անմիջապես նախորդող հաշվեկշռային արժեքով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված

	ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» և որպես վաճառքի համար պահվող դասակարգված ընթացիկ և ոչ ընթացիկ այլ ակտիվներ հաշվառող հաշիվներ
2. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի աճը (արժեզրկման հակադարձումը)	
- երբ այդ ակտիվները չեն կազմում ընդհատված գործունեություն կամ դրա մաս	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
- երբ այդ ակտիվները ընդհատված գործունեության մաս են	632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի նվազումը (արժեզրկումը) և այդ ակտիվների օտարումը	
- երբ այդ ակտիվները չեն կազմում ընդհատված գործունեություն կամ դրա մաս	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
- երբ այդ ակտիվները ընդհատված գործունեության մաս են	732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»

ԴԱՍ 3 «ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող և ակտիվապասիվային հաշիվների, պասիվային են և նախատեսված են սեփական կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 3 «Սեփական կապիտալ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 31 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ», 32 «Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ», 33 «Ֆինանսական արդյունք», 34 «Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)» և 35 «Սեփական կապիտալի այլ հոդվածներ»:

ԽՈՒՄԲ 31 «ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԷՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏ»

31 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 311 «Կանոնադրական կապիտալ», 312 «Զվճարված կապիտալ», 313 «Հետ գնված կապիտալ» և 314 «Էմիսիոն եկամուտ»:

Հաշիվ 311 «Կանոնադրական կապիտալ»

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Կանոնադրական կապիտալի ձևավորման կարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը և դրա հետագա ավելացումները, իսկ դեբետում՝ նվազեցումները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

311 «Կանոնադրական կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3111 «Հասարակ բաժնետոմսեր», 3112 «Արտոնյալ բաժնետոմսեր», 3113 «Բաժնեմասեր», 3114 «Փայեր»:

Կանոնադրական կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի ձևավորում՝	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) այլ ակտիվներով	111 «Մշակող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր»

	116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկաթաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սառնվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»
2. Կանոնադրական կապիտալի հետազա ավելացում՝	
ա) երբ ավելացման (տեղաբաշխման) և ներդրման (վճարման) պահերը չեն համընկնում	312 «Զվճարված կապիտալ»
բ) երբ ավելացման (տեղաբաշխման) և ներդրման (վճարման) պահերը համընկնում են՝	
- դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- այլ ակտիվներով կամ պարտավորությունների մարմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված

	կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
3. Կանոնադրական կապիտալի ավելացում փոխարկելի պարտավորությունների (պարտատոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր և այլն) փոխարկմամբ	412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
4. Կանոնադրական կապիտալի ավելացում սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին	314 «Էմիսիոն եկամուտ» 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»
5. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների իրագործում	352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Կանոնադրական կապիտալի նվազեցում՝	
ա) հետ գնված և շրջանառությունից հանված (մարված) բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին՝	
- հետգնման գնով, երբ հետգնման գինը փոքր է անվանական արժեքից	313 «Հետ գնված կապիտալ»
- հետգնման գնի և անվանական արժեքի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»
բ) թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին	312 «Չվճարված կապիտալ»
գ) նախորդ տարիների վնասի ծածկման նպատակով	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

Հաշիվ 312 «Չվճարված կապիտալ»

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը նախատեսված է կազմակերպության չվճարված կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է մասնակիցների (բաժնետերերի) պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների թողարկած, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ մասնակիցների (բաժնետերերի) պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով և տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի անվանական արժեքը: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

312 «Չվճարված կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվներ՝ 3121 «Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ», 3122 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ մինչև անվանական արժեքի չափով», 3123 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ անվանական արժեքը գերազանցող չափով»:

Չվճարված կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը դերբերով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի, ինչպես նաև տեղաբաշխված (բայց ամբողջովին կամ մասամբ չվճարված) բաժնետոմսերի անվանական արժեքի և դրանց դիմաց վճարված գումարի տարբերության արտացոլում	311 «Կանոնադրական կապիտալ»
2. Հետ գնված(ծեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը չեն համընկնում	313 «Հետ գնված կապիտալ»
3. Տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության արտացոլում	314 «Էմիսիոն եկամուտ»
4. Հետ գնված (ծեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի դրական տարբերության արտացոլում	314 «Էմիսիոն եկամուտ»

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կապիտալում ներդրումների գծով մասնակիցների (բաժնետերերի) պարտքերի մարում	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) այլ ակտիվներով կամ պարտավորությունների մարմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ

	Ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
2. Կանոնադրական կապիտալի նվազեցում թողարկված, բայց չտեղաբաշխված կամ չվճարված բաժնետոմսերի հաշվին	311 «Կանոնադրական կապիտալ

Հաշիվ 313 «Հետ գնված կապիտալ»

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը նախատեսված է մասնակիցներից (բաժնետերերից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է մասնակիցներից (բաժնետերերից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արժեքը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը և վերավաճառքը: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

313 «Հետ գնված կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3131 «Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3132 «Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3133 «Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3134 «Հետ գնված արտոնյալ

բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3135 «Հետ գնված բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3136 «Հետ գնված բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3137 «Հետ գնված փայեր՝ անվանական արժեքով», 3138 «Հետ գնված փայեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով»:

Հետ գնված կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հետ գնված բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) արտացոլում՝ գնման գնով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Շրջանառությունից հանված և մարված բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) արտացոլում՝	
- մինչև անվանական արժեքը	311 «Կանոնադրական կապիտալ»
- անվանական արժեքը գերազանցող մասը	314 «Էմիսիոն եկամուտ»
2. Հետ գնված բաժնետոմսերի վաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը համընկնում են՝	
ա) երբ վաճառքի գինը բարձր է հետգնման գնից՝ հետգնման գնով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ վաճառքի գինը ցածր է հետգնման գնից՝	
- վաճառքի գնով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- վաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»
3. Հետ գնված բաժնետոմսերի վաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը չեն համընկնում՝	

ա) երբ վաճառքի գինը բարձր է հետգնման գնից՝ հետգնման գնով	312 «Չվճարված կապիտալ»
բ) երբ վաճառքի գինը ցածր է հետգնման գնից՝	
- վաճառքի գնով	312 «Չվճարված կապիտալ»
- վաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»

Հաշիվ 314 «Էմիսիոն եկամուտ»

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը նախատեսված է կազմակերպության էմիսիոն եկամտի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, իսկ դեբետում՝ բացասական տարբերությունը: Հաշվի մնացորդը կրեդիտային է: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Էմիսիոն եկամտի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության արտացոլում՝	
ա) երբ տեղաբաշխման և վճարման պահերը համընկնում են	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ տեղաբաշխման և վճարման պահերը չեն համընկնում	312 «Չվճարված կապիտալ»
2. Հետգնված (ձեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի դրական տարբերության արտացոլում՝	
ա) երբ վերավաճառքի և վճարման պահերը համընկնում են	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ վերավաճառքի և վճարման պահերը չեն համընկնում	312 «Չվճարված կապիտալ»

3. Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) շրջանառությունից հանմամբ (մարմամբ) կանոնադրական կապիտալի նվազեցում՝ անվանական արժեքի և հետգնման գնի դրական տարբերության չափով	311 «Կանոնադրական կապիտալ
---	---------------------------

314 «Էմիսիոն եկամույր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության արտացոլում	313 «Հետ գնված կապիտալ»
2. Հետ գնված և շրջանառությունից հանված ու մարված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) անվանական արժեքը գերազանցող մասով էմիսիոն եկամտի նվազեցում	313 «Հետ գնված կապիտալ»
3. Կանոնադրական կապիտալի ավելացում էմիսիոն եկամտի հաշվին	311 «Կանոնադրական կապիտալ

ԽՈՒՄԲ 32 «ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԵՎ ՎԵՐԱԶԱՓՈՒՄԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

32 «Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ», 322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» և 323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ», 324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ», 325 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին վերաբերող չիրացված օգուտներ կամ կորուստներ»:

Հաշիվ 321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որը կիրառվում է, երբ կազմակերպությունն ընտրել է հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները վերագնահատված արժեքով հաշվառելու քաղաքականություն: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կամ արժեզրկման հակադարձումից զուտ օգուտի

տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից, իսկ դեբետում՝ վերագնահատումից կամ արժեզրկումից զուտ կորստի տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից, ինչպես նաև զուտ օգուտի վերագրումը չբաշխված շահույթին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3211 «Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ», 3212 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղութ-
յունների:

**321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»
հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված զուտ օգուտի (հարկային հետևանքներն հաշվի առած) տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

**321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցներին և ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված զուտ կորստի (հարկային հետևանքներն հաշվի առած) տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությանը (ամորտիզացիային) զուգընթաց, ինչպես նաև օտարվող ակտիվներին վերաբերող՝ վերագնահատումից արժեքի աճի վերագրումը չբաշխված շահույթին	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)

Հաշիվ 322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և

կորուստների (բացի հեջի հաշվառման նպատակներով իրական արժեքի հեջի դեպքում որպես հեջավորված հոդված նախատեսված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի՝ հեջավորված ռիսկին վերագրելի օգուտի կամ կորստից) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, չիրացված կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում, իսկ դեբետում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերադասակարգումը շահույթում կամ վնասում: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3221 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ», 3222 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»

Հաշիվ 323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջի ժամանակ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում, ներառումը հեջավորված կանխատեսված գործարքի արդյունքում ճանաչված ոչ ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքում, ինչպես նաև վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով իրական արժեքով վերաչափումից չիրացված զուտ (հաշվի առած հարկայի հետևանքները) օգուտները, չիրացված զուտ կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում և դրանց ներառումը ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական արժեքում, եթե հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը, իսկ դեբետում՝ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերագրումը ֆինանսական արդյունքներին և դրանց ներառումը ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական արժեքում, եթե հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը: Այս հաշվի կրեդիտային մնացորդը իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ որպես հեջավորման գործիք նախատեսված

ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3231 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ», 3232 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»:

Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»
3. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների ներառումը ակտիվների և պարտավորությունների սկզբնական արժեքում (երբ կանխատեսված գործարքի հեջը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման և երբ կազմակերպությունն ընտրում օգուտներն ու կորուստները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում ներառելու քաղաքականությունը համաձայն ՀՀՄՍ 39.98(բ)-ի)	Թղթակցում է ոչ ֆինանսական ակտիվները և ոչ ֆինանսական պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվների հետ

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»

2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»
3. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների ներառումը ակտիվների և պարտավորությունների սկզբնական արժեքում (երբ կանխատեսված գործարքի հեջը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման և երբ կազմակերպությունն ընտրում օգուտներն ու կորուստները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում ներառելու քաղաքականությունը համաձայն ՀՀՄՍ 39.98(բ)-ի)	Թղթակցում է ոչ ֆինանսական ակտիվները և ոչ ֆինանսական պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվների հետ

Հաշիվ 324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունները (փոխարժեքային օգուտները և կորուստները) ներառում են արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերությունները և արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերությունները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից: Արտերկրյա ստորաբաժանումների հետ փոխարժեքային տարբերությունների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտները, չիրացված կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում, իսկ դեբետում՝ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերադասակարգումը շահույթում կամ վնասում: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված

կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3241 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից», 3242 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս համարվող դրամային հոդվածների գծով», 3243 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով»:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

**324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»
հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտների արտացոլում	674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ)	744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»

**324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված կորուստների արտացոլում	774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստներ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ)	644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»

ԽՈՒՄՔ 33 «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ»

33 «Ֆինանսական արդյունք» խումբն իր մեջ ներառում է 331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը:

Հաշիվ 331 «Շահույթ կամ վնաս»

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը նախատեսված է կազմակերպության հաշվետու տարվա գործունեության շահույթի կամ վնասի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Շահույթը կամ վնասը ներառում է տվյալ ժամանակաշրջանում ճանաչված բոլոր եկամուտներն ու ծախսերը (ներառյալ՝ օգուտներն ու կորուստները), բացառությամբ, երբ դրանք ՖՀՄՍ-ներին և կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Հաշվի կրեդիտում արտացոլվում են կազմակերպության գործունեության եկամուտները, ինչպես նաև զուտ վնասի դուրս գրումը, իսկ դեբետում՝ ծախսերը և զուտ շահույթի դուրս գրումը: Այս հաշիվը տարեվերջի մնացորդ չի ունենում: Հաշվետու տարվա զուտ արդյունքը տեղափոխվում է 343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)» հաշվին:

331 «Շահույթ կամ վնաս» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3311 «Շարունակվող գործունեությունից շահույթ կամ վնաս», 3312 «Ընդհատված գործունեությունից շահույթ կամ վնաս»:

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված եկամուտների արտացոլում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» 624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ» 626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» 628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ» 629 «Այլ եկամուտներ» 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից»

	632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերադասակարգման ճշգրտումներից օգուտների արտացոլում	642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» 643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» 644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»
3. Շահութահարկի գծով եկամտի արտացոլում (երբ հաշվետու ժամանակաշրջանում շարունակվող կամ ընդհատված գործունեության արդյունքներով առաջացել է հարկի գծով եկամուտ)	733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» 751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
4. Հաշվետու ժամանակաշրջանի զուտ վնասի տեղափոխում	343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու տարվա վերջի դրությամբ կուտակված ծախսերի հավաքագրում ըստ կազմակերպության գործունեության տեսակների	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր» 715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր» 724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ» 726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ» 727 «Ֆինանսական ծախսեր» 728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր» 729 «Այլ ծախսեր»

	731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից» 732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր» 733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» 751 «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»
